

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՌԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՌԱՓԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017թվականի դեկտեմբերի 23 -ի նիստում

Ա Ռ Ա Փ Ի 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում

1.1 Աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները

1.2 Պատմական ակնարկ

1.3 Ժողովրդագրություն

1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ

1.5 Տեղեկություններ համայնքի ավագանու մասին

1.6 Համայնքի գույքի հաշվառում և կառավարում

1.7 Համայնքի հողային հաշվեկշիռը

1.8 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

1.9 Գյուղատնտեսություն

1.10 Մշակույթ և սպորտ

1.11 Առողջապահություն

1.12 Տրանսպորտ

1.13 Առևտուր

1.14 Կրթություն

1.15 Սոդանք

2. Համայնքի զարգացման գերակա ուղղությունները

3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը և փաստացի վիճակը

4. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

5. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

6. Ոլորտային ծրագրեր

6.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

6.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

6.3 Ֆիզկուլտուրա և սպորտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել հաջորդ հինգ տարիներին Առափի համայնքի զարգացման գերակա ուղղությունները և նշել դրանց հասցնելու հնարավոր ճանապարհները և անհրաժեշտ միջոցառումները: Համայնքի զարգացման գերակա ուղղությունները սահմանելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները, պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Ծրագրի նախագծի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր աշխատակիցները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լուսմների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները: Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առափի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների առաքելությունը համայնքի տարածքում բնակիչների կենսամակարդակի հնարավոր առավելագույն բարենպաստ պայմանների մշտական և կայուն ապահովումն է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման 2017-2021թվականների գերակա ուղղություններ են՝

- ___ Համայնքի դրական վարկանիշի ձևավորումը և հետևողական բարձրացումը.
- ___ Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում.
- ___ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային իրավահարաբերությունների ոլորտում իրականացվող վարչարարության արդյունավետ գործող համակարգի ներդրումը.

- ___ Համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը, վերջիններիս որակավորման և գործունեության արդյունավետության էական բարձրացումը.
- ___ Տնտեսական գործունեության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը.
- ___ Համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների արագ և որակյալ ներդրումը.
- ___ Աղբահանության, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման ծրագրերի իրականացում.
- ___ Համայնքի եկամուտների հավաքագրման և տնօրինման արդյունավետության ու թափանցիկության ապահովումը և համայնքային գույքի արդյունավետ կառավարումը.
- ___ Բնակչության հոգևոր կյանքի և մշակութային արժեքների պահպանումը.
- ___ Երիտասարդության ներուժի ներգրավումը համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի ջարգացմանը ___ Միջհամայնքային կապերի ընդլայնում

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ,

ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առափի գյուղը գտնվում է Շիրակի մարզում, Ախուրյան գետի հովտում՝ ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա:Գյուղի արևմտյան մասը շրջապատված է ցածրադիր լեռներով: Սահմանակից է Մարմաշեն, Ոսկեհասկ, Հայկավան, Ղարիբջանյան գյուղերին և Գյումրի քաղաքին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1523,6 հա, որից՝ 121,0 հա բնակատեղի է:

Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է: Գարունը գալիս է ժամանակին, իսկ ամառը տաք է: Երբեմն տեղումների քանակը կազմում է 250-300մմ: Գյուղը գտնվում է սեյսմիկ գոտում: Առկա են սողանքային երևույթներ: Համայնքի միջով հոսում է Հայաստանի ջրառատ գետերից մեկը՝ Ախուրյան գետը:

1.2 ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի Առափի համայնքը հիմնադրվել է 1720թվականին: Ազգաբնակչության մեծ մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Կարսի և Մուշի շրջաններից: Գյուղի նախկին անվանումը եղել է Օջախուլի: 1946թվականին վերանվանվել է Առափի: Համայնքը հարուստ չէ պատմամշակույթային հուշարձաններով: Հիմնադրման օրվանից համայնքում հիմնականում բնակվել են հայեր: Համայնքն ակտիվ մասնակցություն է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմին և Արցախյան ազատամարտին: Այժմ համայնքում կան 3 հաշմանդամ վետերաններ: Մինչ երկրաշարժը գյուղն ապրում էր բարեկեցիկ կյանքով: Համայնքի բնակիչները ապահովված էին աշխատանքով: Գյուղն ուներ մշակույթի տուն, երկհարկանի դպրոց, մանկապարտեզ: Սակայն աղետը փոխեց գյուղի դեմքն ու սոցիալական վիճակը: Երկրաշարժի հետևանքով փլվեցին դպրոցն ու մանկապարտեզը, վթարային դարձան մշակույթի տունը, գյուղխորհրդի շենքը և շատ բնակելի տներ: 1990-1991թթ. սեփականաշնորհվեցին վարելահողերն ու տնամերձները: Համայնքի բնակիչները սկսեցին զբաղվել գյուղմթերքների արտադրությամբ: Ախուրյան գետի ձախ ափին բնակիչներին հատկացվեցին հողատարածքներ, որտեղ կա ռուցվեցին նոր բնակելի տներ: Վերջին չորս տարիների ընթացքում համայնքում ավելացել է ծնելիությունը: Աստիճանաբար գյուղը փոխում է իր դեմքը: Մարդիկ կրկին զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Շրջակայքը հարուստ է ծանր կավաավազային սևահողային արգավանդ դաշտերով:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ՝ ԱՌԿԱ—2023, այդ թվում՝

տղամարդ—1010

կին---1013

Բնակչության տարիքային կազմը՝

0-4տարեկան—78

5-7տարեկան—57
8-14տարեկան—144
15տարեկան---30
16տարեկան---29
17տարեկան—26
18տարեկան---29
16-62տարեկան—1462
63և ավելի---252

Սոցիալական կազմը՝ այդ թվում՝

Թոշակառուներ---241

Միակողմանի ծնողագուրկ երեխաներ---8

Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ---0

Հայրենական պատերազմի մասն.—3

Հաշմանդամներ-40

Աշխատանք ունեցողներ-130

Տնտեսությունների թիվը---520

Ամուսնալուծված ընտանիքի երեխաներ—3

Միայնակ չաշխատող թոշակառուներ---6

1.4 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2016թվականի հոկտեմբերի 2-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Առափի համայնքի ղեկավար է վերընտրվել

Ալբերտ Վարդգեսի Այվազյանը, ծնված՝ 1957թվականին, ունի բարձրագույն կրթություն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Անուն, ազգանուն, հայրանուն	Պաշտոն	Ծննդյան թիվ	Հեռախոս
1	Այվազյան Ալբերտ Վարդգեսի	Համայնքապետ	18.12.1957թվ.	091236114
2	Պոլեյան Ավետիք Խաչիկի	Տեղակալ	08.01.1962թվ.	093727585
3	Աբելյան Կարինե Երվանդի	Աշխ.քարտուղար	04.09.1958թվ.	094307872
4	Այվազյան Միլվարդ Գեղամի	Գլխավոր մասն.	03.03.1960թվ.	098444978
5	Խաչատրյան Ռուզան Մամիկոնի	Առաջատար մասնագետ	02.05.1954թվ.	077619184
6	Սահակյան Կարինե Արշավիրի	Գրադարանավար	05.09.1957թվ.	098960281
7	Միրզոյան Համլետ Արմենակի	Վարորդ	09.08.1961թվ.	093615229
8.	Ասլանյան Գերասիմ Նիկոլի	Ակումբավար	03.03.1955թվ.	
9	Ասլանյան Գովական Հմայակի	Հավաքարար	16.11.1961թվ.	077442501

1.5 ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԱՍԻՆ

Առափի համայնքի ավագանին ընտրվել է 2016թվ. հոկտեմբերի 2-ին: Կազմված է 7 անդամներից:

- 1.Արփենիկ Գևորգի Վարդանյան----- 1945թվ. բարձրագույն, մանկավարժ
- 2.Աշոտ Ռազմիկի Պոլեյան ----- 1965թվ. բարձրագույն, մանկավարժ

- 3.Լևոն Հրանտի Պապիկյան----- 1947թվ. միջն. մասնագ. վարորդ
- 4.Շամիրամ Նիկոլի Եղիազարյան ----1962թվ. բարձրագույն, մանկավարժ
- 5.Տիգրան Անուշավանի Բարսեղյան--- 1969թվ. միջն. մասն. մեխանիկատոր
- 6.Սամվել Գրիշայի Խաչատրյան----- 1977թվ. միջնակարգ մասնագիտական
- 7.Էդիկ Մարտինի Պոլեյան ---- 1961թվ. միջնակարգ մասնագիտական

1.6 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Առափի համայնքի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի տնօրինման , վարձակալության տրամադրման, օտարման գործընթացով զբաղվում է համայնքի աշխատակիցները: Առափի համայնքապետի կարգադրությամբ իրականացվում է համայնքապետական ողջ գույքի ամբողջական գույքագրում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝

Գույքի հաշվառման համակարգի կատարելագործում: Համայնքի հաշվեկշռում հաշվառված բարոյական և ֆիզիկական մաշվածության ենթարկված գույքերի նկատմամբ, որոնք պահանջում են լրացուցիչ չհիմնավորված ծախսեր, իրականացնել օտարման գործընթաց:

Համայնքային գույքի, օբյեկտների խմբավորում և դասակարգում, դրանց պահպանման և օգտագործման գործընթացի կանոնակարգում և վերահսկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1516,6հա, որից՝

Վարելահող՝

905, հա, որից՝

Սեփականաշնորհված`	782,43	հա
Տնամերձներ`	118,0	հա
Արոտավայրեր`	382,7	հա
Բնակավայրի տարածք`	121.0	հա
Պահուստային`	29.0	հա
Ճանապարհներ`	19.60	հա
Խոտհարք`	0	հա
Օգտ. ոչ պիտանի տարածքներ`	225.0	հա
Սեփակաշնորհված 1 հող. չափը`	1.0	հա
Գերեզմանոց`	2.45	հա
Մարգարաշտ`		
Գյուղացիական տնտես. թիվը`	520	

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ`

Անհրաժեշտ է կանոնակարգել հողերի ընթացիկ հաշվառման և ամենամյա հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները:

Անհրաժեշտ է ճշգրտել համայնքի տարածքում կատարված կադաստրային քարտեզագրման տվյալները: Վերահսկողություն իրականացնել համայնքային գույքի պահպանման և օգտագործման գործընթացի վրա:

1.7 ԲՆԱԿԿՈՍՈՒՆԱԼ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՈՒՄ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ջրապահովվածության պայմաններով համակարգը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում:

Ջրամատակարարման համակարգը կառավարվում է <<Շիրակ Ջրմուղ-Կոյուղի>> ՓԲԸ-ի կողմից: Համայնքը խմելու ջուրը ստանում է <Ղազանչի-Բայանդուր>>, <<Վարդբաղ>> կոչվող ջրատարներից: Ջրամատակարարումը գործում է անխափան: Խմելու որակի ջրի պաշարներով ապահովվածությունը բարենպաստ է:

Ոռոգման ջրի ներտնտեսային ցանց

Համայնքը ոռոգման ջուրը ստանում է Արփա լճի ջրամբարից, բաց և փակ համակարգի միջոցով: Ջրամատակարարման համակարգը Ցկմ է, անհրաժեշտություն կա վերանորոգելու ճկմ հասվածը: Ոռոգումը կատարվում է կիսատաշտակների միջոցով, որի պատճառով տեղի է ունենում ջրի կորուստ: Համայնքի տարածքով հոսող Ախուրյան գետը վեր է ածվել բաց վիճակում հոսող կոյուղու կուլեկտորի:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ:

- Ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ:
- Անսարք ջրային կառույցների վերագործարկում

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Համայնքի էներգահամակարգը կառավարվում է <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>>

ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 2700 ՄՎտ է:

Համայնքի նոր թաղամասի գազամատակարարումը իրականացվում է «Հայ-Ռուս Գազարդ» ընկերության կողմից «Գյումրի-1» և «Գյումրի-2» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից: 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ գազաֆիկացվել են նոր Առափի թաղամասի բնակարանները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի գնահատում

2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Առափիի լուսավորվող փողոցների թիվը կազմել է 10, իսկ լուսավորության ցանցը՝ 10 կմ: 150 հենասյուների վրա տեղադրված են 150լուսատուներ:

Հիմնախնդիրներ

Արտաքին լուսավորության ցանցի ավելացում: Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգոխնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում: Էներգատար տեխնոլոգիաների կրճատում:

Փողոցներ

Իրավիճակի գնահատում

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է: Կարևոր հանգամանք է ճանապարհների ավազակոպտճապատման և հարթեցման աշխատանքների իրականացումը, որն էապես երկարացնում է ճանապարհի շահագործման ժամկետը: Համայնքի փողոցների ընդհանուր մակերեսը կազմում է քմ: 2017 թ. ճանապարհաշինության բնագավառում կներդրվի աշխատանքների իրականացման բովանդակությամբ նոր պայմանագրեր, որով կսահմանվեն նախատեսված աշխատանքների որակի նկատմամբ գործուն հսկողության մեխանիզմներ և երաշխիքներ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մշտապես աշխատանքներ տանել փողոցների փոսալցման և հարթեցման համար:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ

1988թվականի երկրաշարժից հետո Գյումրի քաղաքից մեծ քանակությամբ փլատակներ աղբ էր տեղափոխվել համայնքի տարածք՝ անօգտագործելի դարձնելով մեծ քանակությամբ

հողատարածք: Անհրաժեշտ միջոցառումներից հետո, այժմ գյուղապետարանը վերահսկողություն է իրականացնում, որպեսզի դրսից աղբ չթափեն:

2011թվականից համայնքում հատկացված է տարածք և բնակիչների ունեցած աղբը շաբաթը 2

անգամ աղբատար մեքենան տեղափոխում է աղբավայր:

Ձմռանը ձյան մաքրման աշխատանքները տարվում են գրեյդերների միջոցով, որը պայմանագրով իրականացվում է շինկազմակերպության միջոցով:

Աղբահանության համար բնակիչներից աղբավճար չի գանձվում:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ջրային ռեսուրսների պահպանման խնդիրը պրոբլեմային է: Առավել անբարենպաստ է Ախուրյան գետի վիճակը: Արդյունաբերական և կենցաղային ջրերը առանց մաքրվելու լցվում են գետը: Դեռ 1989թ. սվյալներով գետի աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում էր թույլատրելի սահմանային

խտությունները՝ փոքրացնելով նրա ինքնամաքման հատկությունները: Այժմ ավելի անվերահսկելի է դարձել կեղտաջրերի հոսքը դեպի Ախուրյան գետը: Այժմ գետը թափվող կեղտաջրերի քանակը /~0.5 մ3 /վրկ/ պահանջվում է նոսրացման համար 8 անգամ ավելի մեծ ջրի ծախս /4.0 մ3 /վրկ/, ինչը չի կարող ապահովել Ախուրյան գետի թույլատրելի մակարդակը, քանի որ, ըստ Ախուրիկի դիտակայանի տվյալների, Ախուրյան գետի 75% ապահովվածությամբ միջին օրական նվազագույն ծախսը կազմում է 2.66 մ3 /վրկ: Ախուրյան գետի աղտոտվածությունը դարձել է պրոբլեմային և անհապաղ պահանջում է նոր մաքրման կայանի կառուցում:

ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆՈՒՄ

2013-2016թվ. ապահովվել է կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կատարվել է նոր ծառերի տնկում: Հաշվի առնելով, որ համայնքը գտնվում է անբարենպաստ բնակլիմայական պայմաններում, համայնքի կանաչապատումը շատ դժվարությամբ է կատարվում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

- ___ Շրջակա բնական միջավայրի տարրերի աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում
- ___ Բնական պաշարների արդյունավետ օգտագործում
- ___ Նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումներ
- ___ Ախուրյան գետի ափամերձ տարածքների աղբակույտի վերացում, մաքրում և վերահսկում:

1.8 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 500 առանձնատուն: Սողանքային երևույթների հետևանքով շատերի բնակարանները գտնվում են վթարային վիճակում: Այդ նպատակով մոտ 11 ընտանիքներ ստացել են պետական աջակցություն: Հետերկրաշարժյան տարիներին կառուցվեց Առափիի նոր թաղամասը, որտեղ բնակվում են հիմնականում երիտասարդ ընտանիքներ:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր, խոտ, կարտոֆիլ, եգիպտացորեն, բանջարեղեն: Ավելացել են տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունները: Արտադրվում առվույտի, կորնզանի, սեղանի ճակնդեղի, գազարի, կանաչիների սերմեր: Համայնքում, սակայն, քիչ են տնամերձ այգիների տարածքները: Ոռոգվող հողատարածքները մշակվում են ամբողջությամբ, իսկ անջրդի տարածքների մոտ 20% անմշակ է: Վերջին տարիներին նկատվում է անասնազլխաքանակի դինամիկ աճ: Բայց թե հողագործության, թե անասնապահության մեջ գերակշռում է էքստենսիվ զարգացումը, ինչի հետևանքով համայնքի բնակչության եկամուտները չեն ավելանում: Համայնքը ապահովված է գյուղտեխնիկայի անհրաժեշտ քանակությամբ, որը հնարավորություն է տալիս հողը ցանել, մշակել ու բերքահավաքը կազմակերպել ժամանակին:

ԱՌԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2016թ.
-----------	--------

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	520
ա/անհատական տնտեսություններ	520
բ/կոլեկտիվ տնտեսություններ	
գ/պետական տնտեսություն	
ԳՅՈՒՂԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	
ա/ ցորեն	4800
բ/գարի	8043
գ/կարտոֆիլ	21200
դ/կաղամբ	2000
ե/բանջ.-բոստանային կուլտուրաներ	22050
զ/կաթ	5000
է/միս	150
ը/բուրդ	5
թ/ձու	10000
ժ/մեղր	984
ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ<ՀԱ>	
ա/հացահատիկ	415
բ/կարտոֆիլ	106.0
գ/բանջ-բոստանային կուլտուրաներ	105.0
դ/կաղամբ	8.0
է/առվույտ	87.6
զ/կորնզան	78.0

ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿ	2016թվ.
ա/խոշոր եղջերավոր անասուններ	1100
բ/կովեր	500
գ/խոզեր	114
դ/թռչուններ	2480
ե/մեղվաբնտանիքներ	150

1.10 Մշակույթ, Սպորտ

Երկրաշարժից հետո մասնակի քանդվել էր մշակույթի տունը:

2011 թվականին վերանորոգվել և կահավորվել է մշակույթի տան մի հատվածը, որտեղ իրենց առօրյան են անցկացնում գյուղի մեծերն ու երիտասարդները:

Գործում է գրադարանը: Գրադարանում կա մոտ 6000 կտոր գիրք, ընթերցողների թիվը կազմում է մոտ 300-350մարդ: Սակայն գրադարանը կարիք ունի վերանորոգման:

Համայնքն ունի մարզադաշտ: Մարզադաշտն ունի ցանկապատման և նորոգման կարիք, անհրաժեշտ է անցկացնել լուսավորություն, կառուցել նստատեղեր:

1.11 Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համայնքում գործում է բուժկետը , որտեղ աշխատում են 2 բուժքույր:

Բուժկետը տեղակայված է գյուղապետարանի շենքում, որը վերանորոգվել է 2007թվականին և համալրվել նոր գույքով: Ներդրվել է ընտանեկան բժշկի համակարգը: Ժամանակին են իրականացվում մանկահասակ երեխաների պարտադիր միջոցառումները: Բուժաշխատողների կողմից ամենօրյա հսկողության տակ են նորածին երեխաները: Ամիսը 2 անգամ տեղամասային բժիշկը բնակչության ընդունելություն է կազմակերպում Առափիի ԲՄԿ-ում: Բուժքույրերը ամեն տարի անցնում են վերապատրաստման Կուրսեր:

1.12 ՏՐԱՆՍՊՈՐՏ

Համայնքը ապահովված է Գյումրի – Առափի երթուղով, որը իրականացնում է <<Շամիրամի Նշան>> ՍՊԸ-ն: Երթուղին կատարվում է օրեկան 10 անգամ:

1.13 ԱՌԵՎՏՈՒՐ

Համայնքի տարածքում գործում են 3առևտրի կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար:

1.14 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 116 աշակերտ: Արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում կան 22 աշխատող, որոնցից 20 -ը մանկավարժ են: Դպրոցի շենքը կարիք ունի հիմնանորոգման: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է էներգիայով : 2013թվականից դպրոցում գործում է նախադպրոցական հաստատություն՝ մանկապարտեզ, ուր հաճախում են 20 երեխա և աշխատում են 3աշխատող: Համայնքի մանկապարտեզի շենքը հիմնականում վերանորոգված է, այն ներկայում բավարար վիճակում է, ապահովված է ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Մանկապարտեզը գործում է 5-ժամյա աշխատակարգով, երեխաներին տրվում է տաք սնունդ:

1.15 ՍՈՂԱՆՔ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը գտնվում է

Դրական ոլորտում: Ավագանու որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը, հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը: Համայնքում իրականացվում է տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման ճիշտ գործողություն, որի հիման վրա պլանավորվում ու իրականացվում է համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, քանի որ համայնքին սպառնում է սողանքների վտանգը: Այժմ համայնքում ճապոնացի մասնագետների կողմից տարվում են

Հետազոտական աշխատանքներ սողանքային գոտում: Առափի համայնքում JAICA ճապոնական միջազգային կազմակերպության օգնությամբ համայնքի սողանքային հատվածում կառուցվել է գրունտային ջրերի հեռացման համար նախատեսված դրենաժային համակարգ: Սողանքային հատվածը գտնվում է համայնքի վարչական տարածքի արևմտյան բարձրադիր գոտում: Գրունտային ջրերը դուրս գալով դրենաժային համակարգից միջհամայնքային ճանապարհներով հոսում են դեպի ներքև և նպաստում ճանապարհների քանդմանը, իսկ ձմռանը կնպաստեն ճանապարհների սառցակալմանը, որը իր հերթին կհանգեցնի դեպի համայնք մուտք գործող գլխավոր և միակ ճանապարհի ոչ երթևեկելի դառնալուն նաև սողանքային հատվածին մոտ, բարձրադիր վայրերում գտնվող դեպի բնակելի տներ կղժվարանա բնակչության տեղաշարժը ամռանը քանդված իսկ ձմռանը սառցակալված ճանապարհներով:

Ծրագրի իրականացման դեպքում բնակիչների համար նման խնդիրներ չեն առաջանա, իսկ ջրահեռացման (կոյուղու) կառուցման դեպքում համայնքում կբարելավվի կենցաղային պայմանները

Համայնքում ծրագրի իրականացումը կնպաստի բավարար կենցաղային պայմանների ստեղծմանը, մասնավորապես կլուծվեն առողջապահական խնդիրներ, կբացառվեն համաճարակային իրավիճակների առաջացումը (բնակիչների կողմից օգտագործված և լվացքի միջոցներով հագեցած կեղտոտ կենցաղային ջրերի կուտակումը բակերի մոտ): Համայնքում շահառուներ հանդիսանում են համայնքի բնակիչները, որոնց թիվը համայնքում կազմում է 2023 մարդ, երեխաներ՝ 384 մարդ, ծերեր՝ 252 մարդ, հաշմանդամներ՝ 30 մարդ: Համայնքում սոցիալական վիճակը ոչ բավարար է, որին գումարվում է վատ կենցաղային պայմանները, որն էլ իր հերթին նպաստում է համայնքից բնակիչների արտագաղթին:

1.16 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը և

փաստացի վիճակը

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ	ԱՐԺԵՔԸ ԸՆԴԱՄԵՆԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1	Գյուղապետարանի շենք	1	լավ	1080000	
2	Մշակույթի տուն	1	50% լավ		չի գործում մի հատվածը
3	Գրադարան	1	հարմարեցված		գործում է
4	Բուժկետ	1	վերանորոգված		գործում է
5	Պահակատուն	1	բավարար	72670	օգտագործ.
6	Անգար	1	բավարար	134000	օգտագործ.
7	Պահեստամասերի պահեստ	1	բավարար	103815	օգտագործ.
	ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ				
1	Տրակտոր S-70C	2	սարքին	116000-	
2	Կցասայլեր	2	սարքին	112000-	
3	Գուլթաններ	3	սարքին	19050-	
4	Կուլտիվատորներ համակ. մշակ.	3	սարքին	149500-	
5	ՇարքացանՍԶՈՒ-3,6	2	սարքին	20400-	
6	Շարքացան մանր սերմերի	1	սարքին	10000-	
7	Կարտոֆիլի շարքացան	1	սարքին	15800-	
8	Կարտոֆիլ քանդող	2	սարքին	27900-	
9	Կոմբայն SK5	3	սարքին	361650-	
10	Ակոս հանող	1	սարքին	7200-	
11	Պարարտանյութ ցանող	1	սարքին	4000-	
12	Հակավորող մեքենա	2	սարքին	27000-	
13	ՔամհարՕBC-2.5	1	սարքին	14500-	
14	Սերմագտիչ	2	սարքին	161200	

15	Էլևատոր	1	սարքին	11200	
16	Կշեռքներ	1	սարքին	31865	

**1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ,
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում և SWOT (ՈՒԹՀՍ) վերլուծություն.

ՈՒԺԵՂ	ԹՈՒՅԼ
Մարզի խոշոր համայնքներից մեկը	Բնակլիմայական ցուրտ պայմաններ
Բնակլիմայական զով պայմաններ	Գյուղի գազաֆիկացման բացակայություն
Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն	Հեղեղատարների և ջրահեռացման համակարգի վատ վիճակ
Ոռոգման ցանցի առկայություն	Սողանքային գոտի
Գյուղի միջով հոսող Ախուրյան գետի դրական հնարավորությունները	Մանկապարտեզի բացակայություն
Համայնքի մոտ գտնվելը Գյումրի քաղաքին	Համայնքում կիսակառույցների առկայություն
Մշակույթի տան և գրադարանի առկայություն	Գործարար-ակտիվ երիտասարդների թույլ կապ
Անասնապահություն և հողագործություն	Խմելու ջրի և ջրահեռացման համակարգերի վերանորոգման անհրաժեշտություն
Գյուղից քաղաք երթևեկող տրանսպորտային միջոցների առկայություն	Բնակչության վարկունակության անկում
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՍՊԱՌՆԱԼԻՔ
Համայնքի սահմանամերձ աշխարհագրական դիրքը	Սողանքային գոտի
Գյուղատնտեսական մթերքների արտադրություն	Մերձավորություն Թուրքիայի սահմանին
Տարբեր միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ իրականացրած ծրագրերի փորձի և համագործակցության ապահովման փոխադարձ պատրաստակամության առկայություն	Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ

Ռուսական ռազմաբազայի առկայություն	Ներդրումների անբավարար մակարդակ
	Սոցիալ-տնտեսական անորոշություն Սոցիալ-տնտեսական պաշտպանության անկատար համակարգ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ելնելով համայնքի զարգացման ռազմավարական նպատակներից՝ Առափիի զարգացման 2017-2021 թվականների հիմնական գերակայություններն են՝ բնակչության կենսական շահերի ապահովումը, տեղական ինքնակառավարման համակարգի որակի և արդյունավետության բարձրացումը, համայնքային տնտեսության զարգացման ապահովումը, համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի էական բարելավումը, բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը, այդ նպատակով հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը, համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովումը, այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը, գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, նախադպրոցական կրթական համակարգի շարունակականության ապահովումը, համամարդկային և ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և պատշաճ ներկայացումը, առողջ ապրելակերպի խրախուսումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, երիտասարդական ոլորտի մշտական զարգացումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների մշակում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի ֆինանսական միջոցներն ունեն հետևյալ պատկերը.

h/h	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	2017թվ.	2018թվ.	2019թվ.	2020թվ.	2021թ.
1	Հողի Հարկ	4304.5	4304.5	4304.5	4304.5	4304.5
2	Գույքահարկ	4961.2	5000.5	5000.5	5100.0	5100.0
3	Տեղական տուրքեր	180.0	200.0	300.2	300.2	320.0
4	Հողի վարձակալություն	1083.0	1083.0	1083.0	1083.0	1083.0
5	Այլ ոչ հարկային եկամուտ	52.0	52.0	52.0	52.0	52.0
6	Պաշտոնական տրանսֆերտներ	33407.4	33407.4	33407.4	33407.4	33407.4
	ԸՆԴԱՄԵՆԸ	43988.1	44046.5	44046.5	44247.1	44247.1

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

4.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի վերականգնում , շինարարական աշխատանքների իրականացում . .

- Համայնքի գլխավոր հատակագծի գոտևորման նախագծին համապատասխան՝ մշակել քաղաքաշինական կարևոր հանգույցների մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծային առաջարկություններ.

Ամբողջական կառուցապատման նպատակով առանձնացնել հողամասեր մանկապարտեզի և նոր դպրոցական շենքի կառուցման համար

• Մշակել ծրագիր և պետական կառավարման մարմիններին ներկայացնել՝ վթարային վիճակում գտնվող մշակույթի տունը վերականգնելու և պահպանման համար:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

<<Մանկապարտեզի կառուցում>>

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

- 1. Ծրագրի նպատակը** – գյուղում մանկահասակ երեխաների համար մանկապարտեզի կառուցում
- 2. Ծրագրից ակնկալվող արդյունքները** – հարմարավետ և գեղեցիկ մանկապարտեզ փոքրիկների համար
- 3. Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
- 4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ -10%- ներդրում (հազ. դր.)
 - բ) այլ դոնոր կազմակերպություն (հազ. դր.)
- 5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻ ԶԻ ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆԻՇ	2017 թ	2018 թ	2019 թ	2020 թ	2021 թ	սկիզբ	ավարտ
1	Մանկապարտեզ		Աշխատանքի ծավալ		10%	10%	10%		2018 թ	2020թ

4.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

Համայնքի փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, Համայնքային աղբավայրի ճանապարհի մշտական մաքրում և հարթեցում:

Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կարգավորում, բարելավում, արդիականացում, Գերեզմանոցի տարածքների բարեկարգում, Համայնքում կանաչ գոտիների ընդլայնում., Կանաչ գոտիներում ռոռզման ցանցերի վերականգնում, կառուցում, Համայնքապետարանի աշխատակազմին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների հիմնական վերանորոգում, Ափամերձ տարածքներում սանիտարական մաքրման՝ աղբակույտերի վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում, Իրականացնել բնակիչների իրազեկության բարձրացման միջոցառումներ ու ծրագրեր, կիրառվող լավագույն փորձի կիրառման մոդելի մշակում, Համայնքի բարեկարգման աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած համայնքի բնակիչներին խրախուսում, Համայնքապետարանի քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պլանի կազմում, , Ուժեղ երկրաշարժերի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի կազմում, Համայնքի ամենամյա գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերահսկման միջոցառումների պլանի կազմում:

ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

<<Համայնքի գազաֆիկացում>>

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները

ա/ունենալ նախագծա-հախահաշվային փաստաթղթեր,

բ/ապահովել համայնքի 10%ներդրում՝ աշխատանքների իրականացման համար

գ/Ծրագրի իրականացման համար հիմնավորումներով դիմել Շիրակի մարզպետարան՝ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել գյուղի գազաֆիկացման համար:

Գազաֆիկացման ծրագիրը կազմվել է՝ ելնելով հետևյալ առաջնահերթություններից՝

1. Ծրագրի նպատակը – ստեղծել նոր որակի գյուղական միջավայր

2. Ծրագրից ակնկալվող արդյունքները – Ծրագիրն իրականացնելով կփոխվի գյուղի դեմքը, կաշխուժանա տնտեսությունը, դպրոցն ու մանկապարտեզը կջեռուցվեն ամբողջությամբ, կբարելավվի գյուղացու կենցաղային պայմանները:

3. Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ

4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները

ա) համայնքային բյուջե՝ -10%ներդրում

բ) այլ (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻՉ Ի ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆԻ Ծ	2017 Թ	2018 Թ	2019 Թ	2020 Թ	2021 Թ	սկիզբ	ավարտ
1	Գազաֆիկացում		ԿՄ			10%	10%		2019 Թ	2020Թ

<<Փողոցների բարեկարգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Փողոցաշինության ծրագիրը կազմվել է՝ ելնելով հետևյալ առաջնահերթություններից՝

1. Ծրագրի նպատակը – ստեղծել նոր որակի գյուղական միջավայր

2. Ծրագրից ակնկալվող արդյունքները – հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովում,

3. Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ

4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները

ա) համայնքային բյուջե՝ -4000.0 (հազ. դր.)

բ) այլ (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻ Չ	ԲԱՂԱԴՐԻ Ի ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆԻ Ծ	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	սկիզբ	ավարտ
1	ՓՈՂՈՑՆ.	21500.0	ԿՄ	4000.00	4000.00	4500.00	4500.00	4500.00	2017	2021թ

« Կանաչ տարածքների պահպանում և ավելացում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. Ծրագրի նպատակը – բարելավել բնապահպանական միջավայրը

2. Ծրագրից ակնկալվող արդյունքները – Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը, հիմնել նոր դաշտապաշտպան անտառագոտիներ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները

Խնդիր1. Համայնքի միջոցներով ձեռք բերել տնկիներ

Խնդիր2. Նախատեսել ծառատունկի գոտիները

Խնդիր3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարակական աշխատանքի կարգով,

նպատակ ունենալով մարդկանց մոտ բարձրացնել պատասխանատվությունը:

3. Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ

4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները ա) համայնքային բյուջե՝ – 250.0.0 (հազ. դր.)

բ) այլ (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագի

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻՉ Ի ՄՈՏԱՎՈՐ ԱՐՇԵՔ	ՑՈՒՑԱՆԻՇ	2017 թ	2018 թ	2019 թ	2020 թ	2021 թ	սկիզբ	ավարտ
ԾԱՌԱՏՈՒՆ Կ		ԱՇԽԱՏԱՆՔ Ի ԾԱՎԱԼԸ	250.0	250.0	250.0	250.0	250.0	2017թ.	2021թ.

« ՋՐԱԶԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՂԵՂԱՏԱՐԻ ՄԱՔՐՈՒՄ »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1.Ծրագրի նպատակը-ծրագիրը նպատակ է հետապնդում ապահովել սելավաջրերի հեռացումը ու

կանխել ջրի թափանցումը ճանապարհ: Սարերից իջնող ջրի հունը փոխել և ուղղել դեպի սելավատար

2.Ծրագրից ականկալվող արդյունքները—Ծրագրի իրագործումով կապահովվի սելավաջրերի

Արագ հեռացումը, Ախուրյան գետի բարձրացման դեպքում հեղեղի արագ հեռացում:

3.Ծրագրի հիմնական շահառուները-- բնակիչները

4.Ծրագրի ֆինանսական աղբյուրները---ա/համայնքի բյուջե՝ 5000.0հազ.դրամ

Այլ աղբյուրներ՝ հազար.դրամ

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագի

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻՉ ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆԻՇ	2017 Թ	2018 Թ	2019 Թ	2020 Թ	2021 Թ	սկիզբ	ավարտ
1	Հեղեղատարի մաքրում	5000.0	կմ	5000.0		5000.0			2017 Թ	2019Թ

« Փողոցների նոր լուսատուների անցկացում»

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1.Ծրագրի նպատակը-ծրագիրը նպատակ է հետապնդում ապահովել թաղամասերի անհրաժեշտ գիշերային լուսավորություն

2.Ծրագրից ականկալվող արդյունքները—Ծրագրի իրագործումով կապահովվի փողոցների լուսավորությունը, բնակչի համար գիշերային ժամերին հնարավորություն կստեղծվի ազատ տեղաշարժվելուն:

3.Ծրագրի հիմնական շահառուները-- բնակիչները

4.Ծրագրի ֆինանսական աղբյուրները---ա/համայնքի բյուջե՝1000.0հազ.դրամ

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻ ՉԻ ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆԻՇ	2017 Թ	2018 Թ	2019 Թ	2020 Թ	2021 Թ	սկիզբ	ավարտ
1	Փողոցների	1000.0	Լուսատուկետ	1000.	1000.	850.0	850.0	850.0	2017	2021Թ

	լուսավորություն		Էր	0	0				Թ	

4.3 ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

Մարզադաշտի կառուցում և տարածքի բարեկարգում

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐ

<<ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ>>

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1.Ծրագրի նպատակը-ծրագիրը նպատակաուղղված է բարեկարգ ու կառուցապատված մարզադաշտ ունենալուն

2.Ծրագրից ականկալվող արդյունքները—Ծրագրի իրագործումով համայնքը կունենա կառուցապատված , բարեկարգ,կանաչապատ մարզադաշտ:

3.Ծրագրի հիմնական շահառուները-- բնակիչները

4.Ծրագրի ֆինանսական աղբյուրները---ա/համայնքի բյուջե՝15000.0հազ.դրամ

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

	ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՂԱԴՐԻՉ	ԲԱՂԱԴՐԻ ԶԻ ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔ	ՑՈՒՑԱՆ ԻՇ	2017 Թ	2018 Թ	2019 Թ	2020 Թ	2021 Թ	սկիզբ	ավարտ
1	<ul style="list-style-type: none"> ՄԱՐԶԱԴԱՇՏ S 	15000.0	ԱՇԽԱՏԱ Ք ԾԱՎԱԼԸ %	3000.0	3000.0	3000.0	3000.0	3000.0	2017 Թ	2021 Թ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՍՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը ենթարկվում են մոնիթորինգի, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ կատարել: Մոնիթորինգը իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Համայնքի կայուն զարգացման և պարտադիր խնդիրների կատարման մասով մոնիթորինգի պլանը կազմվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման զարգացման նախարարության կողմից: Ոլորտային կապիտալ ծրագրերի ցուցանիշները և թիրախային արժեքները սահմանված են համայնքի կողմից: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում: Հնարավորություն է ընձեռվելու, որ ծրագրով հատկացվող միջոցների տնօրինումը լինի թափանցիկ և հրապարակային:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի 2017-2021թթ. հնգամյա ծրագիրը կազմված է՝ հաշվի առնելով տեղական բյուջեի եկամուտները, ինչպես նաև պետական բյուջեից կատարվող հատկացումները: Ծրագրում տեղ են գտել մի շարք ռազմավարական խնդիրներ, որոնց իրականացումը անխափոփ են կապված է պետական աջակցության հետ, որի համար կան որոշակի ակնկալիքներ: Կարևորվում է նաև առանձին հիմնադրամների հետ համագործակցությունը: Համայնքի ղեկավարի աշխատակազմը պետք է անհրաժեշտ աշխատանքներ կատարի ապահովելու սեփական եկամուտները, գտնելու նոր եկամտի աղբյուրներ համայնքի առջև ծառայած հիմնախնդիրը լուծելու համար:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կազմված է՝ օգտագործելով ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված <<Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման>> մեթոդաբանությունից:

Առափիի համայնքապետարանի աշխատակազմ

